

## «ԱՂՏՈՐՊԻՈՒԱՆՆԵՐ»

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

բանասիրական գիտ. թեկնածու

### ՍՂԵՐԴԸ ՈՐՊԵՍ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ղձնիք աշխարհի Խերիեթ կամ Սերխեթ գավառը, որ տարբեր աղբյուրներում հիշատակվում է Սղերտ, Սերդ, Սիրթ, Սիերդ, Սներտ և այլ ձևերով, գոյություն է ունեցել շատ վաղուց. նրա հիմնադրումը ոմանք կապում են Տիգրան Մեծի, ոմանք՝ Պարույր Սկայորդու հետ: Ք. ա. Ջ. դարում այն եղել է Հայաստան-Միջագետք և Արեւելք-Արեւմուտք քարավանային ուղիների հանգուցակետերից մեկը, որտեղով անցել է պարսից արքայական ճանապարհը: Սղերդում, ինչպես հայտնի է, պահպանվել են բազմաթիվ պատմական հուշարձանների և հին հայկական բերդերի ավերակներ ու հայերեն վիմագիր արձանագրություններ<sup>1</sup>:

Սղերդը հայտնի է նաև որպես հայկական գրչության կենտրոն, որտեղ գրվել է ԺԵ. դարի երկրորդ կեսին պատկանող Ճառքնտիրը, որի գաղափար օրինակ տվողի՝ Խոջա Մսեհի մասին գրիչ Իսրայելը թողել է հետևյալ հիշատակությունը. «Սա բազում արդինս արար ի կենդանութեան իւրում ի դրունս սուրբ եկեղեցոյ՝ ի գրոց և ի շուրջառաց և ի խաչ արինելոյ, և դէմ եղեալ գնաց ի յերուսաղէմ, և շրջեալ ի տնաւորինական տեղիսն Քրիստոսի, և ուրախութեամբ կատարեալ զուխտն իւր, զոր ցանկայր ի վաղուց հետէ, և արար անդ ողորմութիւն կարաւելոց, և ի յաւուրս տաւնի սուրբ գատկին ետ չունեւորացն ինչս ծածկարար և եմոյծ ի սուրբ Յարութիւն, որ տեսին զյոյսն պայծառ, որ բուրէր ի գերեզմանէն Քրիստոսի ի խնդրոյ Լուսաւորչին Հայոց սրբոյն Գրիգորոյ, և կատարեաց զուխտ իւր, և ել ուրա-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Ծոցիկյան, Արեւմտահայ աշխարհ, Կահիրե, 1947, էջ 672:

խորթեամբ ի ճանապարհ իւր, եւ եկեալ եհաս առողջութեամբ ի հայրենական գաւառն՝ ի քաղաքն **Սղերթ**»<sup>2</sup>:

ԺԶ.-ԺԸ. դարերում Սղերդը մտել է Դիարբեքիի, ապա Բիթլիսի նահանգի մեջ՝ մնալով նույնանուն գավառի կենտրոնը: Եղել է բարգավաճ ու մեծահամրավ քաղաք, որտեղ գործել են հայկական արական եւ իգական վարժարաններ: ԺԸ. դարում քաղաքն ունեցել է 5600 տուն հայ բնակիչ, 3 եկեղեցի՝ առաքելական, կաթոլիկ եւ ավետարանական, ու մի վանք՝ ս. Հակոբ անունով, որն Ի. դարասկզբին ավերակ է դարձել: Սղերդի ու նրա շրջակայքի հայերի ողբերգությունն սկսվել է 1895-ի կոտորածներով, որի ժամանակ քաղաքի հայերից շատերը սպանվել, շատերն էլ՝ բռնությամբ մահմեդականացվել են: Թուրքերն ու քրդերը կոդոպտել են հայերի ունեցվածքը՝ քարուքանդ անելով նրանց տներն ու խանութները:

Ի. դարասկզբին Սղերդում բնակչության թիվը կազմել է 13 հազար, որից 6 հազարը եղել են հայեր, իսկ մնացածը՝ թուրքեր, արաբներ, քրդեր եւ ասորիներ: Ջարդերի ժամանակ թուրքերը ոչնչացրել ու թալանել են հայոց եկեղեցին, առաջնորդարանը, դպրոցը, սպանել են հայ հոգեւորականներին, իսկ բնակչության մեծ մասին բռնությամբ մահմեդականացրել:

Սղերդում ասորական եկեղեցու եւ ասորի եպիսկոպոսի մասին վաղ շրջանի վկայություններ չկան, քանի որ Սղերդը գտնվել է հայոց առաջնորդարանի ենթակայության ներքո: Ասորի եպիսկոպոսներ Սղերդում հայտնվել են միայն ԺԷ. դարից հետո<sup>3</sup>: Ինչպես պարզվում է, այնտեղ ավելի ուշ ընդօրինակվել են նաեւ նոր ասորերեն ձեռագրեր, որոնցից մեկի մասին իր հայտնի աշխատության մեջ տեղեկություններ է հաղորդում Ֆ. Նոն<sup>4</sup>: Խոսքը Խիկարի գրույցի նոր ասորերեն խմբագրության մասին է, որի 1908 թվականի ընդօրինակությունը գիտական շրջանառության մեջ է դրել Սեերտի (Seert, Kurdistan)<sup>5</sup> եպիսկոպոս Ադդայ Շերը: Այն բովանդակում է Խիկարի պատմությունը եւ Եզովպոսի առակները՝ այլ բնագրերի հետ, ենթադրվում է, որ այն պատկանում է ԺԵ. կամ ԺԷ. դարին: Այդ ձեռագիրն առանձնահատուկ է ոչ միայն Սղերդում պահպանված լինելու, այլ նաեւ բացառիկ մի իրողությամբ. դա նոր ասորերեն միակ ձեռագիրն է, որտեղ շեշտվում է Խիկարի ազգությունը. «Ասորի եւ Նինվեի թագավոր Սենեքերիմի եւ Սարիադոմի օրոք կար Ախիկար անունով մի մարդ, **մի իմաստուն հրեա**, որը գրագիրն ու մոբեդն էր այդ թագավորների: Նա շարունակ

<sup>2</sup> Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., Երեւան, 1958, էջ 354:

<sup>3</sup> Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1890, էջ 204-205:

<sup>4</sup> Տե՛ս **F. Nau**, Documents Relatifs à Ahikar, Paris, 1920, էջ 14:

<sup>5</sup> Սեերտը Սղերդն է:

անթերի ծառայում էր նրանց, երբ Ասորեստանի Սենեքերիմը մահացավ 679 թվականին նախքան Քրիստոսը»<sup>6</sup>:

Ակնհայտ է, որ հնարամիտ գրչի ձեռքով բնագիրը խմբագրվել է ոչ միայն Խիկարին հրեականացնելու, այլ նաև Ասորեստանի թագավոր Սենեքերիմի մասին հավելյալ տեղեկություն հայտնելու նպատակադրումով: Այդ ձեռագիրը Ի. դարում պատկանել է Սղերդի ասորի եպիսկոպոս Ադդայ Շերին, որը նախնական կրթություն է ստացել Մոսուլի ճեմարանում, սովորել է արաբերեն, լատիներեն, ֆրանսերեն, թուրքերեն, ինչպես նաև աստվածաբանություն ու փիլիսոփայություն: Հետագայում նշանակվել է Քիրքուկի եպիսկոպոսի օգնական, գրադվել գիտությամբ, ուսումնասիրել է մի շարք լեզուներ՝ եբրայերեն, հունարեն, պարսկերեն, գերմաներեն եւ անգլերեն: Սղերդի եպիսկոպոս է ընտրվել 1902-ին: Գիտական հոդվածներ է գրել Քրդստանի, ինչպես նաև Արևելյան Եկեղեցու պատմության վերաբերյալ: Սպանվել է 1915 թվականին՝ Սղերդի քրիստոնյա բնակչության ցեղասպանության ժամանակ: Ձեռագրերի իր հավաքածուն դեպից առաջ փորձել է փրկել՝ պահպանության տալով Ս. Հակոբ վանքում, որն, ինչպես նշեցինք, ավերակ է դարձել Ի. դարասկզբին: Ուշագրավ է այն, որ նրա իմացած լեզուների մեջ չի նշվում հայերենը, մինչդեռ քիչ հավանական է, որ մշտապես շփվելով Սղերդի հայ հոգևորականների ու բնակչության հետ, նա չի տիրապետել հայերենին: Ինչպես նշեցինք, նրան պատկանած նոր ասորերեն նշյալ ձեռագիրը միակն է, որտեղ ընդգծվում են Խիկարի ազգությունը եւ Ասորեստանի թագավոր Սենեքերիմի մահվան թվականը: Այստեղ հարց է ծագում, թե ինչն է մղել ասորի գրչին՝ դրանց այդքան մեծ կարևորություն տալու ու հավելելու բնագրի մեջ: Փորձենք գտնել այդ հարցի պատասխանը՝ մինչ այդ մեջքերելով նոր ասորերեն ձեռագրերում գրիչների կատարած հավելումների մասին Ֆ. Նոյի հետևյալ միտքը. «Մենք բավականաչափ հիմք ունենք բացատրելու բազմաթիվ անճշտություններ եւ անախրոնիզմներ: Այլ կերպ ասած՝ պահպանված ձեռագրերը կազմում են մի կեղծ գրականություն, բայց կեղծիքը գուցե բնագրերի մեջ է թափանցել առաջին դարերի ասորի թարգմանչի կամ գրիչների կողմից, որոնք իրար են հաջորդել առաջին դարերից մինչև ԺԵ. դարը, որտեղից արդեն սկսվում են մեր ձեռագրերը»<sup>7</sup>:

Իր հոդվածներից մեկում կրկին անդրադառնալով գրիչների միջատություններին՝ Ֆ. Նոն գրում է, որ Խիկարի գրույցը խմբագրվել է իրարից անկախ երկու հեղինակների կողմից, որոնցից մեկը եղել է «Էլոհիստ հրեա», որը ստեղծել է Էլեֆանտինյան պապիրուսները, իսկ մյուսը՝ գուցե

<sup>6</sup> F. Nau, Documents Relatifs à Ahikar, էջ 48:

<sup>7</sup> F. Nau, Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien, Paris, 1909, էջ 117:

հեթանոս արամեացի, որը ստեղծել է արեւելյան խմբագրությունները<sup>8</sup>: Հավելենք, որ վերջինի մեջ է մտնում նաեւ հայերեն խմբագրությունը, որի ամենավաղ բնագիրը պատկանում է Ժ.Դ. դարին, այսինքն՝ նոր ասորերենից ավելի հին է:

Այժմ նորից անդրադառնանք Սղերդին, որի հնագույն շրջանի բնակչության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Գրիգոր Ղափանցյանը. «Եթե վերցնենք «խալդ» էթնիկական եզրույթը, ապա նախ այդ խալդերին տեսնում են Դ. դ. (մեր թվարկությունից առաջ) արեւելյան Տիգրիսի ստորին հոսանքի մոտերքը: Երբ Քսենոֆոնի հրամանատարությամբ հույներն անցնում էին այդ Կենտրիտես գետը, նրանց վրա հարձակվում են արմենները, խալդերը եւ մարդերը: Երեւի այս խալդական հատվածի մնացորդներն են այն 21 գյուղի բնակիչները, որոնք դեռ վերջերս էլ անվանում էին իրենց խալդացի, իսկ շրջանը՝ Խալդան, որը գտնվում էր Սղերդի արեւմտյան կողմերում: Կա եւ «Խալդի-դաղ» սար: Անշուշտ, այս խալդացիք եւ սրանց կից հյուսիսի «խույթ-ալաբան» ցեղերը Սասունում մի ժամանակ մի զանգված են կազմել ուրարտական ծագումով եւ, մեր կարծիքով, մնացորդն են ոչ թե անմիջապես Վանի շրջանի բիայնացի-խալդերի, այլ հին Խուրուշկիայի, որը միշտ կոչվել է «Նաիրյան երկիր», երբ մինչեւ իսկ բուն Ուրարտուն այդպես չէր կոչվում, բացառությամբ «Նաիրի ծով» հորջորջումից, իսկ այդ Xubusškia-ն գտնվել է հենց այդ շրջանում Սղերդի ու Խիզանի եւ թերեւս ավելի արեւելք ընկած շրջաններում: Խալդերի մի մասը գաղթել է իրենց հարեւան մարդերի հետ դեպի հյուսիս-արեւմուտք, որտեղ մարդերը բնակություն են հաստատում հայոց Մարդաղի կոչված՝ Բինգյուլից հյուսիս շրջանում, իսկ խալդերը առաջանում են ավելի հյուսիս՝ մինչեւ Սեւ ծովի ափը՝ բռնելով Տրապիզոնից դեպի արեւելք ընկած շրջանը՝ հետագա Ծանիկան, որ կոչվեց եւ Խալդիա՝ այժմյան Լազիստանը Թուրքիայում: Դրանք վրացացան եւ հետո թյուրքացան մասամբ: Տրապիզոնցի հայերը պահել են այդ «խալդ» անունը «կոպիտ» իմաստով՝ խաղտալեզու, «կոպիտ լեզու»: Հայերը խալդերի այդ նոր հայրենիքը կոչում էին «մտաղտիք»: Մեզ թվում է, որ այդ «կոպտությունը», որ խալդերը պատճառել են իրենց շրջապատի մարդկանց, հմնտ. նաեւ Սասունի խույթ - alartan խալդերին եւ խալդացի քրդերին, որոնք լեռնցի կոպիտ ժողովուրդ են, ինչպես Ստրաբոնի մատնանշումը, որ պոնտական խալդերը ուժեղ եւ ինքնուրույն էին, որ այս բոլորը վկայում է խալդերի (թերեւս ուրարտացիների մի հատվածի) ուժի եւ առնականության մասին: Պոնտոսում կային եւ խալյուրներ, որոնց շատ գիտնականներ նույնպես ցանկանում էին նույնացնել խալդերի հետ, մանավանդ որ այդ խալյուրները լավագույն մետաղագործներն էին՝

<sup>8</sup> Տե՛ս «Revue Biblique Internationale», 1912, Octobre, էջ 76-77:

նման խաղերին: Խաղերի մի մասը, ըստ Լեւոնյան Հատույտի, ասորացել է (նեստորական ասորիներից), իսկ ստվար մասը, անշուշտ, հայացել է ի դեմս այժմյան վանեցիների»<sup>9</sup>:

Ըստ Գր. Ղափանցյանի՝ խաղերի սկզբնական օրրանը կապված է Ք. ա. ԺԳ. դարում հայտնի Ուրուատրի շրջանի հետ, որի անունը հետագայում տրվել է Ուրարտուին: Ուրարտական ցեղերը կարող էին ոչ միայն տարբեր անուններ ունենալ, այլ՝ մինչև իսկ տարբեր լեզուներով կամ բարբառներով խոսել: Սա ինքնին վկայում է, որ Սղերդի բնակչությունն է եղել ուրարտական-հայկական բանավոր մշակույթը պահպանողն ու փոխանցողը: Այստեղ հարկ է նաև նշել, որ Ֆ. Նոյի հիշյալ աշխատության չորրորդ մասը կոչվում է «Դատողություններ արամեական պապիրուսների շուրջ», որտեղ աքեմենյան արամեերենից նոր ասորերեն թարգմանված երեք նախադասություններից մեկում (պապիրուս 61, տող 2) նշվում է Ուրարտուի անունը. «Նրանք պատերազմեցին Տիգրայի դեմ, որն ուրարտական ամրոց է»<sup>10</sup>: Սակայն Ֆ. Նոն դրան բնավ չի անդրադառնում, այլ կտրուկ անցում է կատարում Կղեմես Ալեքսանդրացու վկայությանը, համաձայն որի, Դեմոկրիտեսը Ք. ա. Ե. դարում իր գրվածքներում գործածել է Խիկարի կոթողի գրությունը, այսինքն՝ խիկարյան խրատները:

Ուրարտական եւ վաղհայկական Տիգրա ամրոցի մասին տեղեկություններ է հաղորդում Հ. Մանանդյանը՝ իր «Քննական պատմության» «Արմենները Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ» գլխում՝ ընդգծելով, որ Ք. ա. 520-ական թթ. ապստամբած հայերի «առաջին երեք կռիվները պարսից դեմ տեղի են ունեցել Արմենիայի սահմաններում Զուգա ավանի ու Տիգրա եւ Ուիյամա կամ Հույավա բերդերի մոտ»<sup>11</sup>:

Ինչպես տեսնում ենք, Խիկարի գրույցի թե՛ հին արամեական, եւ թե՛ նոր ասորական խմբագրություններն առնչվում են Հայկական լեռնաշխարհի հետ, մի հանգամանք, որ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Եթե նկատի առնենք պատմական այն իրողությունը, որ Արծրունիները, հավանաբար, ունեցել են միտանի-ուրարտական ծագում<sup>12</sup> եւ խիկարյան խրատների հետ այդ տոհմի կապը գալիս է հնագույն ժամանակներից, ապա կարող ենք ասել, որ Սղերդի բնակիչներն իմացել են Հայոց Սենեքերիմ Արծրունու թագավորության օրոք Խիկարի՝ հայ ժողովրդական իմաստուն լինելու մասին, ուստի եւ ասորի գրիչը կատարել է վերոնշյալ

<sup>9</sup> Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 228:

<sup>10</sup> F. Nau, Documents Relatifs à Ahikar, էջ 93:

<sup>11</sup> Հ. Մանանդյան, Երկեր, հատոր Ա., Երևան, 1978, էջ 58:

<sup>12</sup> Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 24:

հավելումները՝ հայկական միջավայրի հետ խիկարյան խրատների առնչությունները սրողելու նպատակով:

Պատկերացնելու համար, թե ասորի հոգևորականը ինչ վերաբերմունք կարող էր ունենալ հայերի հանդեպ, հարկ է պարզել, թե Ժ. դարից ի վեր ինչ խնդիրներ են եղել հայ-ասորական եկեղեցական հարաբերություններում: Սույն հարցով զբաղված Ե. Տեր-Մինասյանցը տեղեկացնում է, որ ԺԱ. դարավերջին եւ ԺԲ. դարասկզբին հայ-ասորական հարաբերությունները չափազանց սրված են եղել, լարվածությունը հասել է գագաթնակետին: Նա մի կարևոր հիշատակություն է մեջբերում Գրիգորիոս Բարեբրեքոսի «Եկեղեցական պատմությունից»։ «Այն ժամանակ Հայոց կաթողիկոս Գրիգորը մի ճառ գրեց եւ նրա մէջ անարգեց ասորիներին, որովհետեւ նրանք մի մատով են խաչ հանում. այլ եւ խմորուն հացի համար. եւ որովհետեւ նրանք գինին, մեղրն ու իւղը մէջը մուկ ընկնելուց յետոյ էլ օրհնում էին եւ ապա ուտում, խմում: Եւ այդ ճառը դրուեց հայոց վանքում Կիլիկիայում, որ Դրագարկ է կոչում: Բայց երբ որ Բարանդուէասը լսեց, որ հայոց վանականները ամեն ժամանակ կարդում էին ու ասորիներին ծաղրում, լցուեց նախանձով, փոխեց իւր շորերը եւ գնաց հայոց յիշնալ վանքն ու այնտեղ բնակուեց, իբրեւ նոցանից մէկը: Եւ գրեց այն գրութեան մի հակաճառութիւն ծածուկ կերպով եւ ծաղրեց հայերին, թէ նրանք հրէական եղանակով են վարում: Եւ դրեց իւր գրուածքը նրանց մատենադարանում: Մի քանի ժամանակից յետոյ նրանք գտան այն եւ ուղարկեցին կաթողիկոսի մօտ, եւ նրան իմաց տուին այն խորամանկութեան մասին, որ քանեցրել էր այն ասորին իրենց հետ: Իսկ կաթողիկոսն հրամայեց երկու տրակտատներն էլ այրել, թէ իւրը եւ թէ Բարանդուէասինը»<sup>13</sup>:

Հակասություններն առանձնապես ուժգին են դրսևորվել Եդեսիայում, քանի որ ասորիները, «հայերի հետ ունեցած դաշն ուրանալով», մյուս ազգերի հետ են տոնել Զատիկը, իսկ հայերը հաստատ են մնացել՝ հակառակ բոլոր նեղություններին եւ թշնամություններին: Հարաբերությունները խաղաղ չեն եղել նաեւ ԺԳ. դ. Կիլիկիայում, որովհետեւ ասորիների պատրիարք Իգնատիոս Բաբբան Դավիթը մերժել է Խառանի ասորական եկեղեցում հայերի համար աղոթատեղի տալու հայոց կաթողիկոսի խնդրանքը: Հետագայում թեպետ որոշակի խաղաղություն է հաստատվել նրանց հարաբերություններում, սակայն ասորիները, ինչպես ցույց են տալիս վկայությունները, հաջորդ դարերում եւս չարականորեն են տրամադրված եղել հայերի հանդեպ՝ իրենց նախանձը եւ ատելությունը դրսևորելով տարբեր իրադրություններում:

<sup>13</sup> Ե. Տեր-Մինասյանց, Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 258:

Այսպիսով՝ Սղերդը ԺԵ. դարում եղել է հայկական գրչության կենտրոն, որտեղ ավելի ուշ ընդօրինակվել են նաև նոր ասորերեն ձեռագրեր: Դրանցից մեկի բովանդակության մեջ տեղ է գտել նաև Խիկարի գրույցը, որում կատարված վերոնշյալ հավելումները մեզ թույլ են տալիս ասել, որ ԺԱ. դարից ի վեր Խիկարը Սղերդում հայտնի է եղել որպես հայոց Սենեքերիմ արքայի ատենադպիր և հայ ժողովրդական իմաստուն, և հենց այդ պատճառով ասորի գրիչը հարկ է համարել ընդգծել Սենեքերիմի մահվան թվականը և Խիկարի ազգությունը՝ Խիկարյան խրատների սեմական ծագման հարցում որևէ կասկած չթողնելու նպատակով: Այս առումով տեղին է մեջբերել Խիկարի ինքնության վերաբերյալ Գաբրիել արքեպ. Այվազովսկու արտահայտած կարծիքը. «Խիկար իմաստունը ոչ թե Ասորեստանեաց Սենեքերիմ թագավորին ատենադպիրն է եղեր (ինչպես որ Պղնձե քաղաքին անհամ ու անժուր պատմության հեղինակը հնարեր է), հապա ինչպես մենք կը կարծենք Արծրունեաց Սենեքերիմ թագավորին օրերուն, այսինքն՝ ասկից 850 տարիի չափ յառաջ, Հայաստանի մեջ անուանի եղած զուարճարան առակախոս և ժողովրդական իմաստասեր էր»<sup>14</sup>: Փաստորեն, Գաբրիել արքեպ. Այվազովսկին այնքան համոզված է եղել Խիկարի ինքնության հարցում, որ նույնիսկ մեղադրել է նշյալ ժողովածուն կազմողին՝ նրա անունը Ասորեստանի Սենեքերիմ թագավորի հետ կապելու համար: Եթե ԺԹ. դարի հայ արքեպիսկոպոսը Խիկարին ընդունել է որպես հայ ժողովրդական իմաստուն, ապա միանգամայն հավանական է, որ Ի. դարի ասորի եպիսկոպոսը տեղյակ է եղել այդ մասին: Ուստի չպետք է բացառել, որ նշյալ նոր ասորերեն ձեռագիրը կարող էր ընդօրինակվել, խմբագրվել ու գիտական շրջանառության մեջ դրվել հենց Սղերդի ասորի եպիսկոպոս Ադդայ Շերի գրչով:

## РЕЗЮМЕ

Армянская провинция Херхет или Серхет в историческом Агдзнике в разных источниках упоминается как Сгерд, Серд, Сирт, Сиерд, Сеерт. В XV веке Сгерд был одним из средневековых армянских центров письменности и духовности. Сгердское культурное наследие было уничтожено, а армяне были убыты или вынуждены принять мусульманство во время Геноцида Армян с 1895-1915гг. С XVII века в Сгерде действовали и сирийские архимандриты, которые в свою очередь скопировали сирийские рукописи. Об одной из этих рукописей упоминает Ф. Но в своей книге о сирийской редакции

<sup>14</sup> Գ. Այվազովսկի, Հազար և մի առակաւոր բանք ազգայինք և օտարք, Կ. Պոլիս, 1874, էջ ԺԱ.:

“Повести о Хикаре”. Рукопись, сохранившаяся в Сгерде, была скопирована 1908 году, когда сирийским архимандритом был Аддай Шер. Примечателен тот факт, что именно в этой рукописи сделаны дополнения о еврейском происхождении Хикара и о дате смерти Ассирийского царя Сенехериба. Следует найти ответ на вопрос: почему писец сделал эти дополнения?

По мнению Г. Капанцяна, в Сгерде проживали халдейцы, древний очаг которых связан с Уруатры (XIII в. д.н.э.), т.е. с позднейшим Урарту. Большинство из жителей Сгерда, безусловно, были ванские армяне, а часть из них, по мнению Лехмана Хаупта, стали несторьянами. Существует гипотеза, согласно которой армянский княжеский и царский род Арцруни имеет урартское происхождение, их колыбелью был Агдзн в Агдзнике. Армянский архимандрит Габриел Айвазовский в 1874г. впервые заметил, что Хикар был известным армянским мудрецом при Васпураканском царе Сенекериме Арцруни (X в.). Это дает основание предполагать, что сирийский писец (возможно Аддай Шер) знал об этом и сделал вышеупомянутые дополнения, чтобы исключить какое-либо соотношение Хикара с Сенекеримом Арцруни.

## SUMMARY

The Armenian province Xerhet or Serxetq in historical Aghdznik in various sources is mentioned as Sgherd, Serd, Sirt, Seert. In the XV century it was famous Armenian scriptorium and spiritual centre until the Armenian Genocide (1895-1915) when their cultural heritage was destroyed and people were killed or were forced to become Muslims. Since XVII century in Sgherd had been copied Syriac manuscripts. The Syriac version of “Story of Ahikar” was copied in Sgherd in 1908. It was included in the book of Ahikar translations from Syriac into French by F. Nau. Only in this manuscript the Syrian scribe had made additions about the Assyrian king Senekerib’s date of death and Xikar’s Jewish identity. The question is - why he did so?

According to G. Kapantzian, the ancient inhabitants of Sgherd were chaldeans who were deeply tied to Uruatri in XIII century B.C., later Urartu. Most of them were the Armenians of Van, some of them became Nestorian Assyrian. There is a historical theory about Armenian noble family of Artsrunis that he had Urartian rising and Aghdzn was his early estate in Aghdznik. The Armenian Archbishop Gabriel Ayvazovsky stated for the first time in 1874 that Xikar was an Armenian folk sage and lived under the rule of Senekerim Artsruni in the 10<sup>th</sup> century. So we can suppose, that the Syrian scribe probably knew about the relation between Xikar and the Armenian dynasty of Artsrunis. That is why he has made those additions to avoid any connection between Xikar and Senekerim Artsruni.